ԿԱՐԱՊԵՏ ՎՐԴ. ԱՏԻՇԵՑԻ, (Աղրնի Մատենի Թեմ).—Մբ. 1837 ին Ս. Յակոբի վանքին կը կտակէ Պոլիս ունեցած իր մէկ խանութը, ըստ նամակի Ատիշեցի Մարտիրոս քհ.ի (Թ. ՌՄԶԶ =1837)։

ԿԱՐԱՊԵՏ ՎՐԴ. ԿԱՑԾԱԿՆ, ԿԵՍԱՐԱՑԻ? .—Մբ. Զռ. 1802 ին, Վանեցի Թէոդորոս պտրք.էն. 1822 ին կ'սկսի պաշտօնավարել Գահիրէ և շրջականները. 1854 ին կը վախճանի։

ԿԱՐԱՊԵՏ ՎՐԴ. ԿԱՐԲԵՑԻ.—Մբ. 1776 ին կը ձեռնադրուի եպս. Նւ. Կարնոյ, Կարսի եւ Վանայ 1793 ին, տեսնել (Դիւան, Գիրք Ը. էջ 48)։

ԿԱՐԱՊԵՏ ՎՐԴ. Տ. ՎԱՐԴԱՆԵԱՆ, ԿԱՐՆԵՑԻ.—Մբ. Նւ. Կարնոյ, Տրապիզոնի և Կիւմիւշխանէի (1793—95)։

ԿԱՐԱՊԵՏ ՎՐԴ. ՄՇԵՑԻ.—Մբ. Զռ. 1814 ին։

ԿԱՐԱՊԵՏ ՎՐԴ. ՄՈԿԱՑԻ, ԿԱԼՕԵՆՑ.— Ծնողքն են Մեսրոպ և Աշամ, եղբայրները՝ Խաչատուր և Հերապետ, քոյրերը՝ Ցինախ, Վարդ, Մարիամ, հօրեղբայրը՝ Սրապիոն, որդիքը՝ Աւագ և Մխիթար. (ՄԶ. Թ. 100). Աչկ. Ապարանցի Սիմէոն վրդ.ի (+ 1637) որ կը կոչուի պրուեսիկոս (ՄԶ. Թ. 100). 1629ին ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը (ՄԶ. Թ. 295). Գրիգոր Պարոնտէր պտրք.էն Նւ. կը կարգուի (ՄԶ. Թ. 1919)։ Դարանաղցին այսպէս կը վկայէ անոր մասին. «և բազում ժամանակ է որ յերուսաղիմայ սպասաւորութիւն կ'առնէ. յամենայն երկիր ընթանալով. շրջեալ ողորմութիւն խնդրելով վասն սուրբ Յերուսաղիմայ կարեացն և պիտոյիցն և ծանր հարկապահանջութեան աղագաւ։ Մէկ երկու ամ մի ի շուրջ գալով եւ մէկ ամ նստելով. այսպէս ուխտ արարեալ։ Որպէս ի թվին (ՌՀԸ = 1629) յըստամպօլս այլ երեկ նուիրակութեան աղագաւ. նա որպէս զառաքեալ յԱստուծոյ ընկալան... եւ մէկ ամ ու կէս եկաց յըստամպօլ.. և յԱտրանայ և մեր յՐուսատոզ... և այլ ուրեք ոչ կամեցաւ գնալ վասն խառնափնդոր չփոթմանցն ի պատրիարքական երկիւղիցն, որ կամէին խարկանօք յափշտակել ի հաւաքեալ ընչիցն Յերուսաղիմայ, վասն որոյ շուտ ելաւ գնաց ի հետ ուխտաւորացն ծովով յերուսաղէմ.» (էջ 394-95)։ Մոկացի Կարապետ վրդ.ի հմտու-